


# Կոստանդնուպոլսի խորհրդաժողովի ձախողուման պատճառները

Պետրոսյան Նուշիկ Բ.

Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս, ասպիրանտ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0002-2843-8202>  
[nushik.petrosyan@ysu.am](mailto:nushik.petrosyan@ysu.am)

ՀՏԳ՝ 327; EDN: EFYHUM

DOI: 10.58587/18292437-2025.1-21

**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** Քառյակ դաշինք, Անդրկովկաս, Կոստանդնուպոլսի խորհրդաժողովի ձախողում, Գերմանա-թուրքական հարաբերություններ, Բաթումի պայմանագիր, Բրեստ-Լիտովսկի պայմանագիր

## Причины провала Константинопольской конференции

Петросян Нушик Б.

Аспирант, преподаватель, Кафедра международных отношений и дипломатии, Факультет международных отношений, Ереванский государственный университет (Ереван, РА)

**Аннотация.** В этой статье анализируются конфликтующие интересы внутри Четверного союза (Германия, Османская Турция, Австро-Венгрия и Болгария), которые привели к эскалации напряженности в Закавказье в 1918 году. В ней подробно описывается, как расходятся цели этих союзников в регионе, особенно в отношении Батуми и Брестские договоры — в конечном итоге привели к провалу Константинопольской конференции. Статья иллюстрирует, как эти внутренние разногласия подорвали единство Альянса, препятствуя совместным политическим действиям в регионе.

Константинопольская конференция провалилась: то есть не только работа, направленная на подготовку Константинопольской конференции, но и деятельность армянских делегаций оказались напрасными, поскольку, считая свои интересы превыше всего, страны, инициировавшие конференцию, приняли толерантный и уступочный подход к Турции, сделав главным предметом уступок интересы Армении.

**Ключевые слова и словосочетания:** Четверной союз, Закавказье, Провал Константинопольской конференции, Германо-турецкие отношения, Батумский договор, Брестский договор

## Reasons for the failure of the Constantinople conference

Petrosyan Nushik B.

PhD Student, Lecturer, Chair of International Relations and Diplomacy, Faculty of International Relations, Yerevan State University (Yerevan, RA)

**Abstract.** This article analyzes the conflicting interests within the Quadruple Alliance (Germany, Ottoman Turkey, Austria-Hungary, and Bulgaria), which escalated tensions in Transcaucasia in 1918. It details how the divergent objectives of these allies in the region—especially concerning the Batumi and Brest treaties—ultimately led to the failure of the Constantinople Conference. The article illustrates how these internal disagreements undermined the Alliance's unity, hindering joint political action in the region.

The Constantinople Conference failed: that is, not only the work aimed at preparing the Constantinople Conference, but also the activities of the Armenian delegations were in vain, since, considering their own interests as paramount, the countries that initiated the conference adopted a tolerant and concessionary approach towards Turkey, making Armenian interests the main subject of concessions.

**Keywords & phrases:** Quadruple Alliance, Transcaucasia, Failure of the Constantinople Conference, German-Turkish Relations, Batumi Treaty, Brest Treaty

1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով, Հայաստանի Հանրապետությունը տարածքային կորուստներից զատ, կանգնում էր ինքնիշխանության նկատմամբ սպառնալիքների առաջ: Հունիսի 3-ի պարտավորագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվեց զինաթափվել և դիվանագիտական հարաբերություններ չհաստատել Օսմանյան Թուրքիայի հետ պատերազմող պետությունների հետ: Բացի

այդ, Օսմանյան կայսրությունը իրավունք ստացավ իր գործերը փոխադրել Հայաստանի Հանրապետության երկաթգծերով՝ այդ կայսրանները թուրքերի հսկողության տակ պահելով: Տարածքային մեծաքանակ կորստի արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությունն այլևս պարփակվում էր 10,000 քառակուսի կիլոմետր տարածքում:

Բաթումի պայմանագրի վերջին հոդվածում նշվում էր, որ այն մեկ ամսվա ընթացքում պետք է վավերացվեր Կոստանդնուպոլսում, ուստի պետք էր պատվիրակություն ուղարկել այստեղ, պայմանագրի կնքման գործընթացը վերջնականացնելու համար: 1918 թ. հունիսի 13-ի երեկոյան Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ պատվիրակության անդամները, որոնց թվում էին Ալեքսանդր Խատիսյանը (Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար) և Միքայել Պապաջանյանը, Թիֆլիսից ժամանեցին Կոստանդնուպոլիս՝ հունիսի 25-ին մասնակցելու խորհրդաժողովին: Սակայն խորհրդաժողովի ձգձգման պատճառով հայկական պատվիրակությունը հարկադրված Կոստանդնուպոլսում մնաց հունիսի 19-ից մինչև նոյեմբերի սկիզբը [1, էջեր 245-246]:

Ավելի վաղ Հայաստանի կառավարությունը, ձգտելով վերանայել Բաթումի պայմանագիրը և բարելավել փախստականների վիճակը, դիմեց Գերմանիային՝ աջակցություն ստանալու նպատակով: Հունիսի 8-ին Հայաստանի կառավարության անունից Համո Օհանջանյանն ու Արշակ Չուրաբյանը Գերմանիայի արտգործնախարարությանը ներկայացրեցին ուղերձ, որտեղ նկարագրվում էին Արևմտյան Հայաստանի ամայացման, արևմտահայության բնաջնջման և Կովկասում հայ փախստականների ծանր դրությունը՝ խնդրելով Գերմանիայի աջակցությունը այս իրավիճակի կարգավորման համար [9, էջ 522]: Հարկ է ընդգծել, որ ուղերձում Արևմտյան Հայաստանում տիրող ընդհանուր պատկերը ներկայացնելիս հղում էր կատարվում Պաուլ Վայթցի ճանապարհորդական տեղեկագրին: 1918 թ. ապրիլին Պաուլ Վայթցը, Գերմանիայի կառավարության հանձնարարությամբ, մի շարք այլ անձանց հետ ճանապարհորդեց Արևմտյան Հայաստան՝ ուսումնասիրելու այնտեղ տիրող իրավիճակը: Թուրքիայի կառավարությունը աջակցեց այս ճանապարհորդությանը՝ նպատակ ունենալով ապատեղեկատվություն մատուցել և մեղմացնել իր դեմ ուղղված մեղադրանքները հայերի հանդեպ իրագործված ոճրագործությունների կապակցությամբ: Սակայն Վայթցը, ճանապարհորդության ընթացքում շփվելով տեղական բնակիչների հետ, կազմեց մի տեղեկագիր, որը հստակ ու իրական պատկեր էր ներկայացնում Արևմտյան Հայաստանի ամայացած բնակավայրերի վիճակի մասին: Այս տեղեկագիրը, որի արժանահավատությունը պետք է համարվեր անառարկելի, 1918 թ. հունիսի 20-ին ուղարկվեց Գերմանիայի կանցլեր իշխան ֆոն Հերտլինգին [9, էջեր 531-544]:

Հայկական այս երկու պատվիրակությունների գործունեության հաջողությունը պայմա-

նավորված էր Քառյակ դաշինքի երկրների անմիջական շահերից բխող տրամադրություններով, ուստի բարդ է վերլուծել պատվիրակության գործունեությունը՝ առանց հաշվի առնելու ընդհանուր քաղաքական կացությունը, որը մեծ հաշվով պայմանավորված էր աշխարհաքաղաքական դերակատարների շահերով [3, էջ 113]:

Բաթումի պայմանագրի ստորագրումից հետո Գերմանիան սկսեց ավելի վճռական դիրքորոշում ցուցաբերել Թուրքիայի հանդեպ Կովկասում, ինչը պայմանավորված էր թուրքական կառավարության կողմից տարածաշրջանում գերակա ուժ լինելու ցանկությամբ և գործողություններով, որոնք հաճախ չէին համաձայնեցվում Գերմանիայի հետ: Գեներալ ֆոն Լոսովը գերմանական զորքեր տեղադրեց Փոթի-Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղու երկայնքով վերահսկելու համար երկաթուղին, ինչը դժգոհություն առաջացրեց թուրքական բանակի հրամանատարությունում: Կովկասում գերմանա-թուրքական լարվածությունը իր արտացոլումն էր գտնում նաև երկու երկրների պաշտոնական դիվանագիտական հարաբերություններում:

Բրեստ-Լիտովսկի հաշտությունից հետո Քառյակ դաշինքի երկրներից թերևս միայն Օսմանյան Թուրքիային էր վիճակված պատերազմական իրավիճակում որոշակի հաջողություններ գրանցել, ինչը առաջին հերթին պայմանավորված էր Ռուսաստանում տիրող քաղաքական իրավիճակով, Կովկասյան ժողովուրդների միջև առկա պառակտումներով ու տարածքային և սահմանային վեճերով: Այս ամենը խոցելի էր դարձնում Կովկասյան ճակատը՝ թուրքական կառավարության կողմից պանթուրքիզմի վաղեմի գաղափարը կենսագործելու ճանապարհին: Իր հաջողություններից խանդավառված օսմանյան կառավարությունը, այնուամենայնիվ չէր կարող անտեսել իր «մեծ դաշնակցին», ինչպես սովոր էր անվանել Գերմանիային, ուստի ականա պետք էր հրավիրել խորհրդաժողով Կոստանդնուպոլսում, որին պետք է մասնակցեին Քառյակ դաշինքի երկրները:

1918 թ. հունիսի 8-ին գեներալ Էրիխ Լուդենդորֆը, գերմանական բանակի գլխավոր շտաբի պետը, ուղարկեց հեռագիր Էնվեր փաշային՝ պահանջելով հարգել Բրեստ-Լիտովսկի պայմանագրով հաստատված սահմանները: Նա ընդգծեց, որ Օսմանյան Թուրքիան խախտել է պայմանագրի Անդրկովկասին վերաբերող կետերը՝ անտեսելով իր դաշնակիցներին, և նշեց, որ Գերմանական կառավարությունը դրա դեմ արդեն բողոքել է: Լուդենդորֆը հստակ հայտարարեց, որ այս իրավիճակում ինքը չի կարող ճանաչել Օսմանյան Թուրքիայի և անդրկով-

կայան պետությունների միջև կնքված պայմանագրերը, որոնք շրջանցել են Գերմանիային, Ավստրիային և Բուլղարիային: Նա նաև զգուշացրեց, որ եթե Թուրքիան չհարգի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, ինքը ստիպված կլինի այլ որոշումներ կայացնել և դադարեցնել ցանկացած համագործակցություն Թուրքիայի հետ [12, համար 399 փաստաթուղթ]:

Հաջորդ օրը՝ հունիսի 9-ին, գերմանական բանակի գլխավոր հրամանատար ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգը ևս հեռագիր ուղարկեց Էնվեր փաշային, որտեղ խնդրում էր հրամայել թուրքական զորքերին դուրս գալ կովկասյան տարածքներից, բացառությամբ Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների: Այս երկու հեռագրերը ցույց էին տալիս Գերմանիայի ավելի կոշտ և պահանջկոտ դիրքորոշումը Կովկասում Թուրքիայի գործողությունների հանդեպ [8, էջ 394]:

Հունիսի 5-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը տեղեկացրեց Հայաստանի Հանրապետության Բեռլին ուղարկված պատվիրակությանը, որ գերմանական կառավարությունն արդեն ձեռնարկել է գործնական քայլեր՝ Կովկասում թուրքերի առաջխաղացումը կասեցնելու և թուրքերի կողմից գրավված տարածքներում հայ բնակչությանը հետապնդումներից պաշտպանելու նպատակով: Նաև քննարկվում էր համաժողովի հրավիրման պայմանավորվածությունը, որտեղ նախատեսված էր վրացական ներկայացուցչության մասնակցությունը, բայց հայերի մասնակցության հնարավորությունը դեռևս անորոշ էր մնում, քանի որ Կովկասյան Հայաստանում տիրող իրավիճակը բավականաչափ պարզ չէր:

Հունիսի 10-ին հայկական պատվիրակությունը նոր ընդարձակ ուղերձ ներկայացրեց Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը, որտեղ արտահայտեց իր երախտագիտությունը վերոնշյալ նպատակներով ձեռնարկված միջոցառումների համար և ընդգծեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պահանջների կիրառման կարևորությունը: Պատվիրակությունը նաև մանրամասնեց Հայաստանի Հանրապետությունում առկա իրավիճակը և շեշտեց, որ հայ ներկայացուցիչների մասնակցությունը համաժողովին անհրաժեշտ է:

Ուղերձում նշվում էր այն մասին, որ Հայաստանի և Վրաստանի կառավարությունների ձևավորումը տեղի է ունեցել նույն սկզբունքով, և որ վրացական ու հայկական Ազգային խորհուրդների միջև էական տարբերություն չկա: Ինչպես վրացական Ազգային խորհուրդն էր ընտրվել Ռուսաստանի բոլոր վրացիների կողմից, այնպես էլ Հայոց ազգային խորհուրդը՝ Ռուսաստանի բոլոր հայերի կողմից, որոնց 95%-ը բնակվում էր Կովկասում: Պատվի-

րակությունը նաև ընդգծեց, որ Հայոց ազգային խորհուրդը ներկայացնում էր միայն կովկասահայերին: Կովկասում գտնվող թուրքահայերը ընտրություններին չէին մասնակցել և իրենց համար առանձին Ազգային խորհուրդ էին ստեղծել [9, էջ 522]:

Հունիսի 15-ին և հուլիսի 2-ին հայկական պատվիրակությունը ներկայացրեց երկու նոր հուշագրեր գերմանական արտգործնախարարությանը, որոնք նկարագրում էին Կովկասում կուտակված փախստականների ծանր և ողբերգական իրավիճակը: Պատվիրակությունը նշել էր, որ իրենք տեղեկացել են, որ գերմանական կառավարությունը վճռականորեն տրամադրված է և արդեն քայլեր է ձեռնարկել, որպեսզի թուրքական զորքերը ստիպված լինեն ազատել Բրեստ-Լիտովսկի պայմանագրով ամրագրված հայկական տարածքները: Հուշագրում խնդրանք էր հղվում, որ տարածքի ազատումը տեղի ունենա առանց ուշացման՝ փախստական հայերին հնարավոր վտանգներից և կորուստներից պաշտպանելու համար [8, էջ 402]:

Նման իրավիճակում ակնհայտ է դառնում, որ գերմանական և թուրքական դաշնակիցների միջև Կովկասում գերիշխանության և տնտեսական շահերի շուրջ լարված մրցակցություն էր ծավալվում: Հատկապես Բաքվի նավթահանքերը կարևոր դեր էին խաղում այդ մրցակցության մեջ: Հայկական պատվիրակության լավատեսությունը, որ Գերմանիան կպաշտպանի հայ ժողովրդին թուրքերի ոճրագործություններից, իրականության մեջ շատ հեռու էր իրագործումից: Տարածաշրջանը Գերմանիային հետաքրքիր էր տնտեսական առումով, մինչդեռ Հայաստանը ոչինչ չուներ առաջարկելու Գերմանիային: Գերմանական արտգործնախարարությունը, հնարավոր է, փորձում էր ներշնչել այդ լավատեսությունը՝ իր իսկ քաղաքական շահերից ելնելով: Սակայն, ինչպես պարզվեց, Գերմանիան Կովկասում ավելի շատ հետաքրքրված էր իր ազդեցության ոլորտները ամրագրելով, քան հայ ժողովրդի ճակատագրով: Հենց այս նպատակով Գերմանիան պահանջեց Թուրքիայից հրաժարվել Բաքվի վրա հարձակվելու իր ծրագրից և դադարեցնել զորքերի կենտրոնացումը Ելիզավետպոլում: Այդ ընթացքում Գերմանիան պաշտոնապես ճանաչեց Վրաստանը որպես իր պաշտպանության ներքո գտնվող երկիր և այնտեղ տեղակայեց գերմանական զորամիավորումներ՝ լիակատար վերահսկողություն իրականացնելու նպատակով: Սակայն, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որը մի քանի անգամ խնդրել էր Գերմանիայի հովանավորությունը, ամենալավ դեպքում ստանում էր միայն ցավակցություն և հուսադրող խոստումներ [9, էջ 530]:

Թուրքական կառավարությունը դժգոհությամբ էր ընդունել Վրաստանում գերմանական վերահսկողության հաստատման փաստը, սակայն այլընտրանք չունեի, քանի որ Գերմանիան վճռականորեն էր գործում այդ հարցում: Կոստանդնուպոլսի գերմանական դեսպան Բեռնշտորֆը հաղորդում էր, որ գերմանական զորքերը հասել էին Վրաստան և կանխում էին թուրքական զորքերի կողմից Վրաստանի սահմանների խախտման ցանկացած փորձ: Սա ցույց է տալիս, որ Գերմանիան իր ազդեցությունը հաստատելու նպատակով պատրաստ էր դիմել ուժի: Մինևույն ժամանակ, հայկական պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի և Ալեքսանդր Խատիսյանի գլխավորությամբ, Կոստանդնուպոլսում հանդիպումներ էր անցկացնում մեծ վեզիրի և գերմանական դեսպան Բեռնշտորֆի հետ: Պատվիրակությունը պահանջում էր Հայաստանի Հանրապետության համար այնպիսի սահմաններ, որոնք թույլ կտային ընդունել 600,000 փախստական հայերին և ապահովել նրանց գոյատևումը: Սակայն, Բեռնշտորֆը դեսպանատան հաղորդագրության մեջ նշում էր, որ հայ պատվիրակները հաճախ ավելին էին ներկայացնում հայերի թվաքանակը Կովկասի տարբեր շրջաններում, ինչը փաստացի առևտրական մեթոդ էր՝ իրենց պահանջները ներկայացնելու համար: Բեռնշտորֆի մեկնաբանություններով պարզ է դառնում, որ հայկական կողմը պատրաստ էր միավորվել Վրաստանին, սակայն վրացական կողմը հակված չէր այդ միավորմանը՝ պայմանավորված սահմանների ընդլայնման խնդրով և փախստականների ընդունման հնարավորության բացակայությամբ [10, էջ 65]:

Այս իրավիճակը վկայում է, թե որքան բարդ էր այն ժամանակվա քաղաքականությունը Կովկասում, որտեղ տարբեր ժողովուրդների և պետությունների շահերը միահյուսված էին, և յուրաքանչյուր կողմ փորձում էր առավելագույնս շահագործել իր կարգավիճակը՝ մեծ տերությունների աջակցությամբ:

Հունիսի 26-ին հայկական պատվիրակությունը կրկին հանդիպում է գերմանական դեսպան Բեռնշտորֆի հետ՝ բողոքելով հայկական շրջանները Վրաստանին միացնելու մտադրությունների դեմ, որոնց մասին տեղեկացել էին Թիֆլիսի մամուլից: Սա ցույց է տալիս, որ հայկական կողմը ակտիվ կերպով հետևողական էր ինքնիշխանության պահպանման գաղափարին [7, էջ 10]:

Անդրկովկասի սահմանների հարցում դեսպան Բեռնշտորֆի հաղորդագրության մեջ նշվում էր, որ Կովկասը կարող է ստանալ կայունություն միայն այն դեպքում, երբ այն բաժանվի քրիստոնեական և մուսուլմանական հատվածների՝ Բաթումի և Բաքվի ազատ նավա-

հանգիստների կարգավիճակով: Ըստ նրա, վրացիներն ու հայերը պետք է գտնեն իրենց տեղը գերմանական վերահսկողության տակ, իսկ մահմեդականները՝ թուրքերի մոտ: Այս առաջարկը ցույց է տալիս գերմանական կողմի մտադրությունը հաշտեցնել բոլոր կողմերին՝ հենվելով ուժեղագույն տնտեսական շահերի վրա:

Իրականում, գերմանական կողմի առաջարկած լուծումը թվում էր ի վերջո ընդունելի նաև վրացիների համար, քանի որ նրանք մտահոգված էին տնտեսության զարգացմամբ և հայերի՝ որպես կարևոր տնտեսական գործընկերների ներառմամբ:

Այս ամենը ընդգծում է, թե որքան բարդ և բազմաշերտ էր այն ժամանակվա դիվանագիտական իրավիճակը Կովկասում, որտեղ տարբեր ուժեր պայքարում էին ազդեցության և տնտեսական շահերի համար, և ինչպես էին գերտերությունները փորձում կատարել իրենց նպատակները՝ օգտագործելով իրենց դաշնակիցների և հակառակորդների միջև եղած լարվածությունը [9, էջեր 546-547]:

Դեսպան Բեռնշտորֆի տեսակետը Կովկասում երկու պետությունների ստեղծման վերաբերյալ չընդունվեց պաշտոնական Գերմանիայի կողմից: Գերմանիայի զինվորական ղեկավարությունը ավելի որոշակի դիրքորոշում ուներ, որը ընդգծում էր Թուրքիային Կովկասից հեռացնելու և տարածաշրջանը՝ հատկապես Բաքուն և նրա նավթային հարստությունները, լիակատար վերահսկողության տակ պահելու կարիքը: Դա խոսում է այն մասին, որ Գերմանիայի զինվորականները ակտիվորեն փորձել էին առաջ մղել իրենց շահերը՝ նվազագույնի հասցնելով թուրքական ազդեցությունը:

Կովկասում սահմանների հարցում Գերմանիայի զինվորականներն ու դիվանագետները հիմնականում համակարծիք էին, որ դրանք պետք է սահմանվեն ըստ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պահանջների, ինչը նշանակում էր, որ թուրքական զորքերը պետք է հետ քաշվեին սահմաններից: Գեներալ Լուդևիգ ֆոն Ֆելդմարշալ Հինդենբուրգը արդեն հունիսին պահանջներ էին ներկայացրել Էնվերին, իսկ գեներալ ֆոն Կրեսը առաջարկել էր Բաքուն դարձնել ռուսական ազդեցության ոլորտ՝ համագործակցելով խորհրդային Ռուսաստանի հետ [10, էջ 77]:

Այնուամենայնիվ, պաշտոնական Գերմանիան այդ հարցում հավատարիմ չէր նույն հետևողականությանը և վճռականությանը, ինչից օգտվեց Թուրքիան: Գերմանական կառավարությունը՝ չկարողանալով մշակել վերջնական ծրագիր Կովկասի իրադրության համար, զինվորականներին ու դիվանագետներին թողեց ինքնուրույն գործելու: Այս հան-

գամանքից օգտվելով, Թուրքիան չկատարեց իրեն ուղղված պահանջները և շարունակեց ամրապնդել իր դիրքերը Կովկասում՝ հատկապես դեպի Բաքու առաջխաղացում կատարելով:

Գերմանիան և Բուլղարիան արդեն հուլիսին հայտնեցին Թուրքիային՝ Բրեստ-Լիտովսկի դաշնագրին հավատարիմ լինելու մասին՝ պահանջելով Կարսի և Բաթումի ինքնորոշումն ու տեղի բնակիչների վերադարձը: Թուրքական կողմի համար նման պահանջների պայմաններում խորհրդաժողովի հրավիրումն անիրատեսական էր: Սա մեկն էր այն բոլոր տարածայնություններից, որն արտահայտում էր Քառյակ միության երկրների շահերի անհամատեղելիությունը: Տարակարծություններ էին առկա նաև թուրք-բուլղարական հարաբերություններում: Բուլղարիան պատրաստ էր ընդունել թուրքական տիրապետությունը Արդահանի, Կարսի և Բաթումի նկատմամբ՝ Թրակիան ու Դորբուջան ստանալու պայմանով: Գերմանա-ավստրիական կողմի դեպքում հակասություններն արտահայտվում էին՝ լեհական խնդրով պայմանավորված: Օսմանյան Թուրքիան պատերազմում Քառյակ միության հաղթական ելքի հարցում գերազնահատում էր իր դերը, միաժամանակ անընդունելի համարելով Կովկասյան խնդրում Գերմանիայի միջամտությունը՝ այն համարելով միջամտություն իր ներքին գործերին:

Գերմանիային Անդրկովկասում ռազմաքաղաքական խնդիրներից ոչ պակաս հետաքրքրում էր տնտեսականը: Հովի. Քաջազունու բնորոշմամբ Թուրքիան և Գերմանիան, լինելով պատերազմական դաշնակիցներ, այնուամենայնիվ ակնհայտ հակադրվող շահեր. «Նրանք դաշնակիցներ են, բայց միևնույն ժամանակ նաև մրցակիցներ և այն էլ շատ խանդոտ մրցակիցներ: Նրանք ուշադրությամբ հետևում են իրար, և նրանցից յուրաքանչյուրի փոքր-ինչ շեղումը առաջ էր բերում մյուսի բողոքը» [2, էջեր 7-8]: Թուրքիան փակում էր Գերմանիայի ճանապարհը՝ ներթափանցելու Մերձավոր Արևելք, և միաժամանակ զրկում տարածաշրջանի՝ վերջինիս խիստ անհրաժեշտ բնական հարստություններից օգտվելու հնարավորությունից:

Նման պայմաններում, Գերմանիան արևելյան սահմանները ապահովելու համար, նախընտրեց շահել ռուսական բարեկամությունը և ավելի ուշ՝ օգոստոսի 27-ին կնքվեց ռուզերմանական դաշինք (Բրեստի լրացուցիչ պայմանագիր), որով Բաքուն մնում էր Ռուսաստանին՝ գերմանական տնտեսական շահերը բավարարելու պայմանով: Գերմանիան հրաժարվում էր Ադրբեջանի և Հայաստանի անկախությունը պահանջելուց, սակայն փոխարենը վրացական հարցում ընդունում էին հետևյալ բանաձևը. «Վրաստանի անկախու-

թյանը դեմ չեն լինի, եթե Գերմաններն ընդունեն» [6, թթ. 2-83]:

Նման փոխհարաբերությունների պայմաններում, որ առկա էր Քառյակ միության երկրների միջև գնալով անորոշ էր դառնում հայկական պատվիրակության գործունեությունը: Բեռլինում հայկական պատվիրակությունը թեև սկզբում ջերմ ընդունելություն գտավ, սակայն շուտով հասկացրին անգամ պատվիրակության՝ Բեռլինում գտնվելու ավելորդ լինելը: Սա այն դեպքում, երբ գերմանական ներկայացուցիչ Փոն Լոսովն ինքն էր խորհուրդ տվել, որ հայերը անկախություն հայտարարեն և պատվիրակություն ուղարկեն Բեռլին: Արդեն օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հայկական ներկայացուցիչներին Բեռլինում հայտնում էին, որ ուժով ոչինչ անել չեն կարող, իսկ բարեկամությամբ հարցը լուծում չի ստանա, ուստի առաջարկում էին դիմել Ավստրիային, որը կարող էր պաշտպանել՝ գորքեր ուղարկելով [3, էջ 114]: Հայկական պատվիրակությունը եղավ նաև Ավստրիայում, սակայն այստեղ ևս խոստումներից այն կողմ ոչինչ սպասելի չէր, իսկ Բուլղարիայի պարագայում հույսեր ունենալն սպարոյուն էր, քանի որ նա պատրաստ էր իր շահերը առաջ մղելու համար Թուրքիային զիջումներ անել Կովկասում:

Այս պայմաններում հայկական պատվիրակությունը հուսահատության էր մատնված, քանի որ օգոստոսին ռուսական կողմի հետ դաշինքով փաստացիորեն Գերմանիան ճանաչում էր Վրաստանի անկախությունը՝ միաժամանակ խոստանալով ռուսական կողմին Հայաստանի և Ադրբեջանի հարցում թուրքական կողմի հետ պայքարելու պարագայում, չաջակցել Օսմանյան Թուրքիային, իսկ Անդրկովկասյան երկրների «դաստիարակելու» հարցում դիվանագիտական ճանապարհով տրամադրել աջակցություն ռուսական կողմին [4, թ. 12]:

Ռազմաքաղաքական իրավիճակը զարգացավ այնպես, որ Կոստանդնուպոլսում խորհրդաժողովը, շարունակ հետաձգվելով, ի վերջո չկայացավ: Պատճառներից մեկը հանդիսանում էր այն, որ դաշնակիցներ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի պահանջների կատարումից հրաժարվելու նպատակով՝ Օսմանյան կայսրությունը որդեգրեց խորհրդաժողովի գումարումը ձգձգելու մոտեցում: Այդ պահանջները գերազանցապես միտված էին հասնելու Բրեստ-Լիտովսկի պայմանագրով սահմանների հստակեցմանը և թույլ չտալ տարածքային այն սահմանազատումը, որն ամրագրվել էր Բաթումի հաշտության դաշնագրերով և դրանց կից լրացուցիչ արձանագրություններում [5, էջ 14]: Մյուս պատճառը տարածաշրջանում Քառյակ միության պետությունների միջև գոյություն ունեցող հակասություններն էին,

շահերի բախումները. ներքին տարածայնություններն ու անհամաձայնություններն աստիճանաբար ավելի ու ավելի էին սրվում՝ պայմանավորված գերմանա-թուրքական կողմի ռազմական անհաջողություններով ու Առաջին աշխարհամարտում նրանց հնարավոր պարտության հանգամանքով:

Ստեղծված ռազմաքաղաքական նոր իրավիճակում, Կոստանդնուպոլսում խորհրդածոցով գումարելը այլևս նպատակահարմար չէր նույնիսկ դաշնակից Գերմանիայի համար: Գերմանիան ստիպված հրաժարվեց այս դիվանագիտական մարտավարությունից, ինչի արդյունքում Կոստանդնուպոլսի խորհրդածոցովը կորցրեց իր արդիականությունը և ձախողվեց:

Այնուամենայնիվ, խորհրդածոցովում քննարկման ենթակա կարևորագույն հարցերը դարձան Քառյակ միության պետությունների և հրավիրված պատվիրակությունների ներկայացուցիչների միջև մասնավոր հանդիպումների և դիվանագիտական բանակցությունների նյութ [1, էջեր 388-340]: Այսինքն ապարդյուն էին ոչ միայն Կոստանդնուպոլսի խորհրդածոցովի նախապատրաստմանը միտված աշխատանքները, այլև հայկական պատվիրակությունների գործունեությունը, քանի որ գերակա համարելով սեփական շահերը, խորհրդածոցովը նախաձեռնող երկրները որդեգրեցին Թուրքիայի նկատմամբ հանդուրժողական և զիջողական մոտեցում՝ որպես զիջումների հիմնական առարկա դարձնելով հայկական շահերը:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. **Պետրոսյան Գ.**, «Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1920թթ»: – Երևան, ԵՊՀ հրատարակչություն. 2023:
2. **Պետրոսյան Գ.**, Քառյակ միության պետությունների շահերի բախումը Անդրկովկասում (Հայաս-

տանը Կոստանդնուպոլսի խորհրդածոցովի նախօրեին, 1918 թ. մարտ - հունիս): // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն. 2022, № 2, 3-14

<https://doi.org/10.46991/BYSU:D/2022.13.2.003>:

3. **Խաչատրյան Ա.**, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները..., :
4. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 644, թ. 12 նաև Հ. Օհանջանյանի նամակը Բեռլին, օգոստոսի 19:
5. ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 13, թ. 14:
6. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 644. թ 2-83:
7. **Հայրունի Ա.**, Հայկական հարցը 1918 թ. հայ-գերմանական և գերմանա-թուրքական հարաբերությունների համատեքստում: – Երևան, 2020, <https://arar.sci.am/dlibra/publication/192947/edition/175302/content>
8. Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. – Potsdam, 1919, S. 394.
9. Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan. – Jerewan, 2004, S. 522.
10. **Hayruni A.**, Armenien in der Deutschen Aussenpolitik in Jahr 1918, Jerewan, Verlag der SUJ, 2017, S. 65, [http://publishing.yvu.am/files/Armenien\\_in\\_der\\_deutschen\\_Aussenpolitik\\_im\\_Jahre\\_1918.pdf](http://publishing.yvu.am/files/Armenien_in_der_deutschen_Aussenpolitik_im_Jahre_1918.pdf)
11. Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke, zusammengestellt und eingeleitet von Wolfgang Gust. St'u <http://home.t-online.de/home/wolfgang.gust/dvita.htm>, համար 399 փաստաթուղթը:

Տճանա/Հանձնվել է՝ 28.01.2025

Рецензирована/Գրախոսվել է՝ 03.02.2025

Принята/Ընդունվել է՝ 10.02.2025